հետ: «Նա կը յաղթվի և կոչնչանայ», հաւատացնում են նրանք և այդ մտքից սաստիկ վշտանում են: Նոքա փորձով գիտեն, թէ ի՞նչ բան է եւրոպական կօնցերտը, երբ նրան չէ մասնակցում Ֆրանսիական ջութակը և ռուսաց փախենում են պրուսական թմբուկի դղրդիւնից: Նոքա հաւատացած են, որ այդ թմբուկի ոչնչացնող և ճնշող ձայնին ոչինչ չէ կարելի ընդդիմադրել, մանաւանդ եթէ այդ թմբուկի հետ միանայ անգլիական պատերազմական փողը:

Անգլիայի հետ աւստրօ-ունգարական կառավարութիւնը բանակցում է և ամենքին յայտնի է, որ Բերլինը Լօնդօնի հետ աւելի էլ աջողութեամբ է բանակցում, աշխատելով Անգլիային կցորդել աւստրօ-գերմանական դաշնադրութեանը: Շատերը հաւատացնում են, որ պայմանները արդէն պատրաստ են, մնում է նրանց ստորագրել և որ երկու կողմերի քաղաքականութեան ղեկավարները միատեսակ ցանկանում են ստորագրել այդ պայմանները:

Աւստրօ-Գերմանական դաշնադրին Անգլիայի կցորդվելը առիթ է տալիս Վիէննայի քաղաքագէտներին վախենալ Ֆրանսիայի վիճակի համար և այդ է պատճառը, որ նոքա այդ պետութեանը խորհուրդ են տալիս գործողութիւնների ազատութիւն պահպանել:

Գարտմանի գործը աւստրիական քաղաքագէտներին առիթ տուեց ուրախանալու, որովհետև նոքա կարծում էին, որ այդ գործը առիթ կը տայ Ռուսաստանի և Ֆրանսիայի յարաբերութիւնների սառելուն: Մանաւանդ նրանց ուրախացրեց Վիէննայում տարածված այն սխալ լուրը, իբր թէ ռուսաց դեսպանը Փարիզում պէտք է թողնէր իր տեղը, եթէ ֆրանսիական կառավարութիւը Գարտմանին չը յանձնէր Ռուսաստանին: Հէնց որ այդ լուրը տարածվեցաւ Վիէննայում, «Fremden-blatt» լրագիրը մի յօդուած տպեց, որով ապացուցանում էր, թէ Ֆրանսիան պարտաւոր չէ կատարել Ռուսաստանի պահանջը: Այդպիսի միտք պաշտպանելը շատ օտարոտի է աւստրիական պաշտօնական լրագրի համար, քանի որ Աւստրիան յանձնում է ամեն տեսակ չարագործներին բոլոր պետութիւններին առաջին պահանջի համեմատ: Ամենքը կարող են խօսել հիւրընկալութեան իրաւունքի մասին, բայց Աւստրիան այդ չէ կարող անել: Այդպիսի դէպքերում նա պէտք է լաւ ի նկատի առնելով, որ ինքը յետ է տուել այնպիսի յանցաւորներին, որոնց մինչև անգամ ոչ ոք չէ պահանջել:

ԱՖԳԱՆԻՍՏԱՆ

«Times» լրագրի մէջ տպված է մի թղթակցութիւն Կաբուլից, որը նկարագրում է անգլիացիների դրութիւնը նրանցից գրաւած երկրի մէջ: Թղթակցի նպատակն է հաստատել, որ Աֆղանիստանի միացնելը Հնդկաստանի հետ անհրաժեշտ է: Թղթակիցը ի նկատի չառնելով, որ անգլիական հասարակական կարծիքը բոլորովին հակառակ է այդ մտքին, պատմում է, թէ ի՞նչ կը պատահի, եթէ Աֆղանիստանը անկախ մնայ: Այդ պատմութիւնը բաւական հետաքրքիր է: Թղթակիցը ամենից առաջ մատնացոյց է լինում այն հանգամանքի վրա, որ անգլիացիք ոչ մի յարմար աֆղանցի իշխան չունեն ի նկատի, որ կարողանան նրան աֆղանական գահը բարձրացնել: Կաբուլի մէջ այժմ հաւաքված են Աֆղանիստանի թագաւորող տան բոլոր անդամները բացի երկուսից: Բայց դրանցից ոչ մէկը ընդունակ չէ բարձրանալ աֆղանական գահի վրա և մի և նոյն ժամանակ պաշտպանել անգլիական շահերը: Նրանցից ոչ մէկը տեղական ազգաբնակութեան մէջ ոչինչ հեղինակութիւն չունի և բացի այդ նոքա ամենքը միմեանց փոխադարձապէս ատում են: Թղթակիցը ասում է, որ դրանցից ընտրված էմիրը իսկոյն գահընկէց կը լինի, հէնց որ անգլիական զօրքերը կը հեռանան Կաբուլից: Էմիր լինելու համար միակ ընդունակ մարդը Աբդուրախման-խանն է, որ թէպէտ շատ ժամանակ մնացել է Ռուսաստանի մէջ և բարեկամ է ռուսների հետ, այնու ամենայնիւ մեծ հեղինակութիւն ունի աֆղանցիների մէջ և հէնց որ անգլիացիք կը հեռանան, նա առաջ կը տիրապետէ Կաբուլը և յետոյ ամբողջ Աֆղանիստանը: Մնում է ուրեմն Աբդուրախման-խանին անգլիացիների կողմը դարձնել և այդ գործը անկարելի չէ: Աբդուրախման-խանը իսկական աֆղանցի չէր լինի, եթէ իր բարեկամական զգացմունքները դէպի Ռուսաստանը արգելէին նրան անգլիացիների կողմը անցնել այն դէպքում, եթէ անգլիացիների առաջարկութիւնները նրա համար շահաւէտ լինեն: Այդպիսով անգլիացիք երկու կերպ կարող են դուրս գալ ներկայ դժուար դրութենից. կամ պէտք է Աբդուրախման-խանին իրանց կողմը դարձնեն, կամ Աֆղանիստանը միացնեն Հնդկաստանին: Աֆղանիստանը Հընդկաստանին միացնելու մասին խօսք անգամ չէ կարող լինել, որովհետև անգլիական պարլամենտի մէջ հազիւ թէ տաս մարդ գտնվին, որոնք գուցէ համաձայնվեն այդ մտքի հետ, միւսները հակառակ կը լինեն: Անգլիական կառավարութիւնը իմանալով այդ մինչև անգամ առաջարկութիւն չի անի: Մնում է միայն Աբդուրախման-խանին փողի օգնութեամբ անգլիացիների կողմը դարձնել:

Ինչպէս երևում է Աբդուրախման-խանը բոլորովին մտադիր չէ բանակցութիւններ ըսկսել անգլիացիների հետ: Գեներալ Րօբերտս, որ չափազանց ցանկանում է նրա հետ բանակցութիւններ սկսել, չէ կարողանում հաստատ իմանալ Աբդուրախման-խանի բնակութեան տեղը:

«Daily News» լրագրի տեղեկութիւնների համեմատ Մահմէդ-խան փակվել է Գազնիի մէջ, յարաբերութիւններ է կապել Աբդուրախմանի հետ և հրաժարվելով բանակցել գեներալ Րօբերտսի հետ, մտադիր է արշաւել Կաբուլի վրա:

ԳԵՐՄԱՆԻԱ

Մարտի 1-ին գերմանական պարլամենտի մէջ կարդացվեցաւ 1874 թ. զինուորական օրէնքի փոփոխման նախագիծը: Նախագծի ընթերցանութիւնից յետոյ պարլամենտի մէջ վիճաբանութիւններ եղան, որի ժամանակ գերմանական պարլամենտի անդամ գեներալ-ֆելդմարշալ կոմս Մօլտկէ մի ճառ կարդաց, որից կարելի է իմանալ Գերմանիայի զինուորական կուսակցութեան տրամադրութիւնը: Այդ ճառը հետևեալն է:

«Ո՞վ կարող է բացասել, որ Եւրոպան հառաչում է զինուորված աշխարհի ճնշման տակ: Ազգերը մէկը միւսի դէմ զինուորվում են փոխադարձ անհաւատարմութեան պատճառով: Այդ անհաւատարմութիւնը և կասկածը կարող են աւելի շուտ ոչընչանալ կառավարութիւնների համաձայնութեամբ, քան թէ միջազգային եղբայրութեան, միջազգային պարլամենտի և ուրիշ այս տեսակ յիմարութիւնների օգնութեամբ: Պարոններ, բոլոր ազգերը խաղաղութեան պէտք ունեն և ես կարող եմ հաւատացնել, որ բոլոր կառավարութիւնները քանի որ ույժ կունենան, կը պահպանեն նրան: Շատերը կառավարութեան վրա նայում են ինչպէս մի թշնամի ույժի վրա, որին հարկաւոր է ամեն կերպ սահմանափակել: Ես հակառակ կարծիքի եմ. կառավարութիւնը պէտք է ուժեղացնել և բոլոր միջոցներով պաշտպանել: Թոյլ կառավարութիւնը տարաբաղդութիւն է ամենքի համար և վտանգաւոր է դրացու համար: Մենք վկայ ենք եղել այնպիսի պատերազմների, որոնց ոչ թէ ժողովուրդները կամ պետութեան գլուխն են ցանկացել, այլ կուսակցութիւնների առաջնորդները, որոնք ազդել են առաջ ժողովուրդի և յետոյ թոյլ կառավարութեան վրա: Երկիրներ նուաճելու և վրէժխնդրութեան ցանկութիւնը, ներքին կարգերից անբաւական լինելը, դարերի ընթացքում մի այլ պետութեան հպատակ դարձած ցեղակից ժողովուրդը նորից նուաճելու ձգտումները, այս և ուրիշ շատ պատճառներ կարող են նոր խառնակութիւնների տեղի տալ և այդ պատճառով ես երկիւղ եմ կրում, որ մենք դեռ ես երկար ժամանակ ստիպված կը լինենք ծանր զէնքեր կրել մեր պատմական զարգացման և համաշխարհային դրութեան պատճառով: Եթէ պատմաբանօրէն խօսենք, Գերմանիան՝ իբրև կայսրութիւն եւրոպական պետութիւնների ընտանիքում նոր անդամ է և այդ նոր անդամի վրա թերահաւատութեամբ են նայում, մինչև որ նրա հետ լաւ կը ծանօթանան: Իսկ ինչ կը վերաբերի մեր աշխարհագրական դրութեանը, մեր բոլոր հարևանները ետևից ազատ են, նոքա ետևից ունեն Պիրենեան կամ Ալպեան սարերը, կամ կիսավայրենի ժողովուրդներ, որոնցից վախենալու առիթ չունեն, մինչդեռ մենք շրջապատված ենք եւրոպական մեծ պետութիւններով:

Արևելեան և արևմտեան մեր հարևանները իրանց երեսը մի կողմ պէտք է շուռ տան, իսկ մենք ամեն կողմ: Մեր սահմանների մօտ նոքա կարող են և արդէն կենտրօնացրել են զինուորական նշանաւոր ույժեր, մինչդեռ մեր գունդերը հաւասարապէս բաժանված են ամբողջ կայսրութեան մէջ: Այդ իրողութիւնը մենք մեզ համար թշնամական չը պէտք է համարենք: Եթէ մեր դրացիները Գերմանիան իրանց համար վտանգաւոր են համարում, նոքա իրանց տեսակէտից արդար են, բայց այնուամենայնիւ մենք այդ պայմանները պէտք է ի նկատի առնենք: Պէտք է ի նկատի ունենալ նոյնպէս, որ մեր շուրջը զինուորական ույժերը մեծանում են:»

Յետոյ գեներալ Մօլտկէ մատնացոյց է լինում Ռուսաստանի և Ֆրանսիայի զինուորական ույժերի վրա: Թւանշաններով հաստատում է, որ Ռուսաստանը, դեռ ռուս-թիւրքաց պատերազմից առաջ, մեծացրել էր իր զինուորական ույժերը և հիմա էլ շարունակում է մեծացնել, որ Ֆրանսիան ֆրանս-գերմանական պատերազմից յետոյ կրկնապատկեց իր զինուորական ույժերը, մինչդեռ Գերմանիան չը փոփոխեց իր զինուորական ույժերը: Այդ բոլորը ասելուց յետոյ, Մօլտկէ շարունակում է:

«Այսպիսի դրութեան ժամանակ մեզանից պահանջում են, որ մենք ամենից առաջ զինաթափ լինենք: Միթէ Գերմանիան երբ և իցէ զէնք է բարձրացրել, եթէ ստիպված չէ եղել պաշտպանել իրան: Ուրեմն, մենք չենք կարող ընդդիմանալ կառավարութեանը, երբ նա առաջարկում է չափաւորապէս մեծացնել մեր զինուորական ույժերը, որպէս զի մեր դըրացիներից յետ չը մնանք: Պէտք է ցաւել, պարոններ, որ անհրաժեշտութիւնը գերմանական ազգից նոր զոհաբերութիւններ է պահանջում: Ճշմարիտ է զոհաբերութիւնները և ծանր աշխատանքը վերանորոգեց մեր ազգութիւնը (ծափահարութիւններ), բայց ծերերը յիշում են, որ թշնամու արշաւանքները բոլորովին ուրիշ տեսակ զոհեր են խըլում, քան թէ նրանք, որոնք այժմ պահանջվում են: Նոյն իսկ պետութեան կրեդիտը կախված է նրա անվտանգ լինելուց: Ի՞նչպիսի երկիւղ կընկնէր Բօրսայի մէջ, ինչպէս կը փոխվէին սեփականական յարաբերութիւնները, եթէ կարելի լինէր կասկածել պետութեան ամրութիւնը: Չը մոռանանք, պարոններ, որ գերմանական կայսերական հզօրութեան անկումից յետոյ, որ Գերմանիան պատերազմի դաշտ էր դարձել, որ շվէդացիք, Ֆրանսիացիները և նոյն իսկ գերմանացիք աւելի քան թէ մի դար շարունակ Գերմանիան անապատ դարձրին: Միթէ Նեկկարի, Րէյնի և երկրի խորքերում գտնված աւերակները մեր թուլութեան և դրացիների ինքնակամութեան յիշատակներ չեն: Ո՞վ կը ցանկանայ վերադառնալ այն ժամանակներին, երբ օտար թագաւորի հրամանով գերմանացի զինուորները պէտք է Գերմանիայի վրա գնային: Ոչ, պարոններ, ամենից առաջ պաշտպանենք կայսրութեան պատիւը և ապահովութիւնը, պաշտպանենք վաղուց ցանկացած և վերջապէս ձեռք բերած ազգային միութիւնը, պահպանենք խաղաղութիւնը, քանի որ մեզ վրա չեն յարձակվում: Մեր ույժը և մեր զէնքերը սպառնալիքներ չեն լինի, այլ խաղաղութեան պահպանելու գրաւականներ: Թոյլ ույժերով երբէք չէ կարելի նպատակին հասնել: Իւրաքանչիւր ազգի բաղդը նրա սեփական ուժից է կախված: Կառավարութեան առաջարկութիւնը ես իրաւացի, ժամանակայարմար և անհրաժեշտ եմ համարում:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական դեսպանը Փարիզում իշխան Հօհենլօէ նորերումս յետ կանչվեցաւ Բերլին կառավարութենից: Լրագիրները հաղորդում են թէ դեսպանի յետկանչելու պատճառը այն է, որ նրան վեց ամսով պէտք է յանձնվի արտաքին գործերի մինիստրի պաշտօնը: Բացի այդ իշխանին առաջարկվեցաւ ժամանակաւորապէս փոխարինել գերմանական պետութեան կանցլեր իշխան Բիսմարկին և պրուսական մինիստրութեան փոխ-նախագահի պաշտօնը վարել, բայց նա հրաժարվեցաւ այդ առաջարկութիւնների ընդունելուց: Իշխան Հօհենլօէ իշխան Բիսմարկի առանձին հաւատարմութիւն ունի:

—Լահօրից «Daily News» լրագրին հաղորդում են, որ Հերատում դարձեալ կռիւ սկսվեցաւ Հերատի և Կաբուլի գունդերի մէջ: Կաբուլցիները վերջնականապէս ջարդված են:

—Նորերումս լրագիրները լուր հաղորդեցին, որ մի յոյն Պապանդօպուլօ անունով մտադիր է եղել փորձել սուլթանի կեանքին ձեռնամուխ լինել: Այդ յոյնը բռնված է և իրան Անգլիայի հպատակ է յայտնել: Նրա մօտ գտել են դինամիտով լցված 12 ռումբեր: Յոյնը քննութեան ժամանակ առաջ խոստովանվել է, որ մտադիր է եղել սուլթանի կեանքին ձեռնամուխ լինել, իսկ յետոյ մերժել է իր առաջին ցուցումը և ասել է, որ ռումբերը նրա տանը դրել է իր եղբայր Արիստատէս, որ նորերումս մահմեդականութիւն է ընդունել և նրան մատնել է:

—Լրագիրներին Լօնդօնից հաղորդում են իբրև ենթադրութիւն, որ անգլիական և ռուսաց կառավարութիւնների մէջ եղած բանակցութիւնները կարող են այս հետևանքներին հասնել. Ռուսաստանը իրաւունք կունենայ գրաւել իր զօրքերով Մերվ, իսկ Հերատը կը գրավվի անգլիական կամ պարսկական զօրքերով: Երբ ռուսները կը մաքրեն Մերվը, անգլիացիք կը վերադարձնեն Աֆղանիստանին Հերատը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԻԵՎ, 6 մարտի: Կիևվի համալսարանի մի ուսանող Պօլիկարպօվ անունով, մարտի 4-ին իր բնակարանի մէջ վիրաւորեց խանջալով մի պարոնին, Պօլօզօվին, որ եկած էր նրա մօտ ճաշելու համար: Պօլօզօվի հասարակական կոչումը անյայտ է: Երբ որ Պօլօզօվ կարողացաւ ազատվել մարդասպանի ձեռքից և դուրս վազել գաւիթը, Պօլիկարպօվ անձնասպանութիւն գործեց ռէվօլվէր արձակելով իր վրա: Պօլիկարպօվի դիակը հետախուզելու ժամանակ գտան նրա ժիլէտի տակ կախված խանջալի պատեանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ